ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 122-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության Սյունիքի մարզի դատախազի 2024 թվականի հունիսի 4–ի և 2024թվականի հունիսի 25-ի գրությունները

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի 2006թվականի մայիսի 22-ի որոշումը՝ համայնքային սեփականություն հանդիսացող՝ 09-063-001-024 կադաստրային ծածկագրով 4,824 հա հողամասը Լիանա Մարտունի Արզանյանի ընտանիքին անհատույց օգտագործման իրավունքով օտարելու մասին,
2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի 2009թվականի մայիսի 05-ի N 05-Ա որոշումը՝ համայնքային սեփականություն հանդիսացող 09-063-105-026 կադաստրային ծածկագրով 19,88 հա հողամասն Արտյուշա Մինասյանին օտարելու մասին,
3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ավագանու 2009թվականի հուլիսի 8-ի 22-ի որոշումը՝ համայնքային սեփականություն հանդիսացող 09-063-0105-0027 կադաստրային ծածկագրով 12,58 հա հողամասն աճուրդով «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը վաճառելու և 2009թվականի հոկտեմբերի 01-ի հողամասերի աճուրդով վաճառքի արդյունքների մասին արձանագրությունների և նույն հողամասը Արտյուշա Մինասյանին օտարելու մասին ՀՀ Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի 2009թվականի հոկտեմբերի 02-ի N 06-Ա որոշումը,

անվավեր ճանաչելու վերաբերյալ(այդ թվում՝ ածանցյալ պահանջներ) ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու ՀՀ դատախազության Սյունիքի մարզի դատախազի առաջարկությանը:

2. Լիազորել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի խորհրդական Կարեն Յուրիի Ջավահիրյանին (ն.ք. 006461701, տրված 07 . 11 . 2017թ . 032-ից)՝ ՀՀ վարչական դատարանում իրականացնելու հայցվորին վերապահված լիազորությունները:
3. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -12	Դեմ -1	Ձեռնպահ -2
ԱԲՈՒՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ	ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ	ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ		ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ		
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ		
ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ		
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ		
ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԵՆՈՒԱ		
ՄԱՇՈՒՐՅԱՆ ԴԱՎԻԹ		
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ		
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ		
ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ		
ՏՈՌՈՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2024թ. հունիսի 27
ք. Գորիս